«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ՝ «ՃԱՄԲԱՐԱԿԻ Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆՎ. N 2 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ Հասմիկ Անդրանիկի Մելքումյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/՝6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն……3
2. Գլուխ I. Ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելագործում 6
3. ԳԼՈՒԽ II. Հետազոտական աշխատանքների անցկացման մեթոդները և նպատակները..... 14
4. Եզրակացություն..... 17
5. Գրականության ցանկ 19

Ներածություն

Հետազոտության կարևորությունը։ Յուրաքանչյուր ժողովուրդ քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու իր անձնագիրն ունի։ Հայ ժողովրդի համար այդ անձնագիրը նրա հոգևոր – մշակութային անսպառ հարստությունն է, որի կրողը իր ազգային դիմանկարով և համամարդկային գաղափարներով օժտված ուսուցիչն է։

Ամեն մի պատմաքաղաքական ժամանակաշրջան յուրովի կապի մեջ է եղել, տվյալ ժամանակի համար կարևոր հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունն է ակնկալել ուսուցչից, որը սերունդներին ժամանակին կապող, ժամանակի շունչը դարձնող կարևոր օղակն է։

Իսկ հիմա, անկախության ուղով աներկբայորեն ընթացող մեր ժողովրդի, մեր պետականության, այն է՝ ուսուցման ու դաստիարակության նոր չափորոշիչների ոգուն համապատասխան նոր սերնդի հոգեկերտվածքի ձևավորման գործում ավելի է կարևորվում ուսուցչի դերը։

Հասարակական- քաղաքական փոփոխությունները նոր խնդիրներ դրեցին հայ ազգային դպրոցի առջև։

Ավանդական հայ դպրոցը, որ իր զարգացման ինքնատիպ ուղին առանձնահատուկ նվաճումներով հարստացրեց նույնիսկ խորհրդային կայսրության գաղափարական պարիսպների ներսում, այսօր մտել է նոր բարեփոխումներով հարուստ փուլ։

Փոխվել է ժամանակը, փոխվել են պահանջները, ավելի են կարևորվել մեր ազգային վերածնունդը խարհրդանշող արժեքները նորից վերագնահատելու, մեր սեփական դիմագիծը ձևավորելու խնդիրները։ Դպրոցում դասավանդվող առարկաների մեջ այդ խնդիրների իրագործման պատասխանատվությունը ծանրացած է ուսուցչի վրա։

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև։ Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով։ Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունի։

Հայաստանի հանրակրթության ոլորտի վերջին տարիների բարեփոխումներում առանցքային տեղ են գրավում ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության խնդիրները: Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է պայմանավորված մեր երկրի ապագա զարգացումը:

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն:

Ձևավորվում է ուսուցչի մասնագիտական մակարդակի բարձրացում և առարկայական բարձր որակավորում ունեցող ուսուցիչների հարուստ կազմ:

Ընդունելով բոլոր մասնագիտությունների կարևորությունն ու անհարժեշտությունը՝ չենք կարող չնշել, որ ուսուցչի աշխատանքն առանձնանում է բոլոր մասնագիտություններից այն պարզ պատճառով, որ այն իր բնույթով արարող, ստեղծող, սկիզբ դնող մասնագիտություն է: Վերջապես ուսուցչից սկսվում և ուսուցչին են հանգում բոլոր մյուս մասնագիտությունները: Իսկ այդ հայեցակարգում իրենց բացառիկ դերն ունեն հայոց լեզվի և գրականության ուսուցիչները՝ որպես պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական համակարգի ձևավորող: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, ավանդույթները, սովորույթները:

Հայոց լեզվի և գրականության ուսումնառության ընթացքում ձևավորվում, զարգանում և կատարելագործվում են սովորողի անձնային նկարագիրը, վերաբերմունքը կամ դիրքորոշումը իր երկրի, պետության, ազգային արժեհամակարգի, սեփական անձի և կյանքի հանդեպ (ՀՊՉ):

Այստեղ է, որ կարևորվում է ուսուցչի վարպետությունը, աշխատանքային փորձը, ստեղծագործական ունակությունների ուղղվածությունը:

Օտար լեզուների այս աննախադեպ մրցավազքում հայոց լեզուն և գրականությունն ունեն մեծ հոգածության և ուշադրության կարիք, քանզի մյուս բոլոր առարկաները դասավանդվում են հայոց լեզվով։

Հետազոտության նպատակը։ Հետազոտական աշխատանքի նպատակն է հանդիսացել ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը։

Գլուխ I

Ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելագործում

«Ուսուցիչները, որպես գիտության տեղական լուսատուներ, պետք է կանգնեն իրենց մասնագիտության ժամանակակից գիտելիքների ողջ բարձրության վրա»: (Մենդելեև Դ.Ի.)

Դարեր շարունակ փիլիսոփաները, հոգեբանները, մանկավարժները, այսօր նաև սոցիոլոգները փորձել են տալ մարդու դաստիարակության ուղիները, մեթոդները, միջոցներն ու ձևերը: Եվ այդ տեսակետների, գաղափարների ու տեսությունների հիման վրա ձևավորվել է մի համակարգային գիտություն, որը կոչվում է մանկավարժություն:Մանկավարժությունը հունարեն բառ է: Այն բաղկացած է երկու հասկացություններից παιδ (paid) երեխա և αγω (ago) տանում եմ, առաջնորդում եմ: Ուրեմն մանկավարժություն եզրույթի տառացի նշանակությունն է առաջնորդել երեխաներին:

Երեխաների ուսուցման ու զարգացման հիմնախնդիրները միշտ էլ առաջնային և կարևոր են եղել հասարակության համար, ուստի և զգալի պահանջներ են ներկայացվում նրանց, ովքեր դրանք պետք է լուծեն գործիմացորեն և վարպետությամբ: Եթե դաստիարակությունը՝ որպես հատուկ հասարակական երևույթ և գործառույթ երևան է եկել մարդկային հասարակության առաջացման հետ, ապա մանկավարժությունը՝ որպես գիտություն, ձևավորվել է զգալիորեն ուշ: Մանկավարժական առաջին գաղափարները երևան են եկել հույն իմաստասերների Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Դեմոկրիտի, Պյութագորասի, Զենոնի, Սենեկայի և այլոց աշխատություններում: Հայաստանում քրիստոնեական կրոնի ընդունման հետևանքով ոչնչացվել են գրավոր հուշարձանները, և մեզ տեղեկություններ չեն հասել հին շրջանի դպրոցի և մանկավարժական մտքի վրաբերյալ: Մանկավարժության վերաբերյալ առաջին գիտական գաղափարները երևան են եկել հայ գրերի գյուտի և դպրոցների ստեղծման հետ միաժամանակ: Հայ խոշորագույն փիլիսոփաները, մանկավարժները, աստղագետներ, բնագետներ,

մաթեմատիկոսներ իրենց աշխատություններում արծարծել են ուսուցման, դաստիարկության, դրանց իրացման մեթոդներին, սկզբունքներին առնչվող շատ հարցեր: Վերածննդի շրջանի հայ մանկավարժները անդրադարձել են դաստիարակության խնդիրներին, ուսուցման աստիճաններին, մեթոդներին, սկզբունքներին, կրթության բովանդակության հարցերին (Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Իմաստասեր և այլք):

Դպրոցի, կրթության զարգացման գործում մեծ է հայ մանկավարժական մտքի դերը: Գրերի գյուտից հետո Մաշտոցը և իր աշակերտները Հայաստանի նահանգներում, գավառներում հիմնեցին հայալեզու դպրոցներ, ստեղծեցին դասագրքեր, թարգմանեցին Աստվածաշունչը, որն իրավամբ համարվեց «Թագուհի թարգմանչաց»: Հայալեզու դպրոցների ձևավորումը նպաստեց թարգմանչական, գրչության արվեստի, գրականության, փիլիսոփայության, բնագիտության, նաև հայ մանկավարժական մտքի զարգացմանը: Մանկավարժության զարգացման գործում զգալի դեր խաղացին Տաթևի, Գլաձորի, Սանահինի, Սիսի համալսարանները, Անիի, Նարեկա, Վարագա, Ամարասի, Գլաձորի և այլ վանքերի դպրոցները: Հայկական դպրոցի զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել Մաշտոցը, Պարթևը, Փարպեցին, Դավիթ Անհաղթը, Շիրակացին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհ. Սարկավագ Իմաստասերը, Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և այլք: 10-րդ դարը հայ իրականության մեջ նշվում է վաղ վերածնունդով. Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում արծարծված են անձի ձևավորման, դաստիարակության հիմնահարցերը:

Հայաստանի հանրակրթության ոլորտի վերջին տարիների բարեփոխումներում առանցքային տեղ են գրավում ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության ոլորտի բարեփոխումները: Հանրակրթության ոլորտի նորմատիվային դաշտի ձևավորումից հետո Հայաստանի դպրոցների բոլոր ուսուցիչները մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնց ընթացքում ուսուցիչներին ներկայացվել են Հանրակրթության պետական կրթակարգը, առարկայական չափորոշիչները, ուսուցման ինտերակտիվ և համագործակցային մեթոդներ, գնահատման նոր մոտեցումներ: Իրականացվել են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների գծով վերապատրաստումներ: 2010թ-ին ՀՀ հանրակրթական

ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի ընդունումից հետո ներդրվեց ուսուցիչների ատեստավորման համակարգը։ Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում և դրա հիման վրա ատեստավորվել։ Բարեփոխումներ են իրականացվել են նաև կրթության բովանդակության ոլորտում։ Ձևավորվել է կրթության բովանդակության չափորոշչային համակարգը, ինչի պարագայում մշակվում են հանրակրթության աստիճաններին (տարրական, միջին և ավագ) և դասավանդվող առարկաներին ներկայացվող արդյունքները։ Ուսումնական ռեսուրսների ու դասավանդման նպատակն այդ արդյունքներն ապահովելն է։ Ուսուցիչը ակտիվ մասնակցություն է ունենում առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներին, սեմինարներին, գիտաժողովներին և հետազոտական աշխատանքներին։ Եվ պետք է հիշել որ մասնագիտական մակարդակի բարելավումը յուրաքնաչյուր ուսուցչի պարտականությունն է։

Տարիների վաստակ ունեցած ուսուչիներիս մեծ մասը իրենց գործունեության մեծ ժամանակահատված կրթությունն իրականացրել ենք հիմնականում աշակերտակենտրոն սկզբունքով, որտեղ ուսուցիչը դասընթացի կազմակերպման կենտրոնական, գլխավոր անձն էր, որը ղեկավարում էր ուսումնական գործունեությունը, պատրաստի գիտելիքներ էր հաղորդում աշակերտին և ակնկալում նրանից իր ցանկացած պատասխանը։

Ժամանակակից հայ դպրոցի ուսումնական գործունեության հիմքում ընկած է աշակերտակենտրոն ակզբունքը, աշակերտը սուբյեկտից վերածվել է օբյեկտի։ Սա ողջ աշխարհում այսօր կարևորվող կառուցողական կրթության պահանջն է՝ կառուցված համաշխարհային փորձի արդյունքների հիման վրա։ Ուսուցման ոլորտում օգտագործվող բազմակի մեթոդներն ու հնարները իրենց մեջ ներառում են 3 կարևոր խնդիր՝

- ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն)
- ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ)
- ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա)[1]

[1] https://hy.wikipedia.org/wiki/Ուսուցման_մեթոդներ_և_հնարներ

Ուստի կրթական համակարգի փոփոխությունները մեզ՝ վաստակաշատ ուսուցիչներիս, դարձրին յուրովի նորարար, ստեղծագործող ուսուցիչ, և մենք դարձանք ստեղծագործական աշխատանքի նորարար ջատագովներ: Շատերի նման մենք էլ մեր դասերը կառուցում ենք հետազոտական մեթոդով՝ ուսուցման մեջ ներգրավելով աշակերտներին՝ նրանց մղելով ինքնուրույն ստեղծագործական գործունեության:

Կարևորում ենք ուսուցչի կողմից դասի մանրակրկիտ նախապատրաստումը: Շատ արդյունավետ է ԽԻԿ (խթանում-իմաստի ընկալում-կշռադատում) համակարգի օգտագործումը դասին: Այն արդյունավետ ձև է դասը ճիշտ պլանավորելու և նպատակային իրականացնելու համար: Այս համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռում մեզ՝ իրականացնելու ուսումնական տարբեր գործողություններ, զարգացնում մեր ստեղծագործական ակտիվությունը և օգնում՝ ուղղորդելու սովորողին՝ ակտիվացնելու նրա մտածողությունը:

Խթանման փուլի նպատակն է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել դասավանդվող նյութին, խթանել նրանց հետաքրքրությունը: Այս փուլում ուսոցչի առջև դրվում են հետևյալ խնդիրները.

- սևեռել աշակերտի ուշադրությունը, շարժել հետաքրքրությունը և ուղղորդել մտածողությունը տվյալ թեմայի շուրջ,
- հիշեցնել, վեր հանել նախորդ գիտելիքները
- կապել արդեն ունեցած գիտելիքները նորի հետ,
- գտնել խթանումն իրականացնող արդյունավետ մեթոդներ ու հնարներ[2]

Ուսուցման տարբեր հնարների և մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ավելացնել ուսուցիչների կողմից նյութերի մատուցման հետաքրքիր հնարները՝ դասավանդման ընթացքը դարձնել ավելի ակտիվ, մասնակցային և խրախուսել վերլուծական-քննադատական միտքը աշակերտների շրջանում:

Այս մեթոդների կիրառմամբ 7-րդ դասարանում անցկացվել է Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» թեմայի ուսումնասիրումը «Շրջված դասարան» մեթոդով:

[2] Տողանյան Ն., Խաչատրյան Հ., Գրականություն-: Մեթոդական ձեռնարկ.-Եր.: Զանգակ-, 2008, էջ 3-4, 2008

Դասից առաջ աշակերտներին է ուղարկվել դասին վերաբերող տեսանյութը, որով աշակերտը կարողանում է կատարել ուսումնասիրություն։

Թեման՝ Բակունցի «Սպիտակ ձին»

Նպատակը՝

- ընկալել, վերարտադրել պատմվածքի բովանդակությունը,
- բացատրել, թե ինչու է այն այդպես վերնագրված,
- վեր հանել պատմվածքի հիմնական գաղափարը,
- դատողություններ անել և սեփական կարծիքն արտահայտել պատերազմի բերած ավերածությունների, մարդկային ճակատագրերի վերաբերյալ,
- բնութագրել հերոսների կերպարները իրենց իսկ հոգեկան աշխարհում, խոհերում։

Խթանում՝

- հանձնարարել ծանոթանալ Բակունցի պատմվածքներին,
- կարդալ «Սպիտակ ձին» պատմվածքը,
- գրել պատմվածքի բարբառային բառերը և գրել դրանց գրական համարժեքը,
- կարո՞ղ են Բակունցի հերոսները խոսել գրական հայերենով։

Իմաստի ընկալում՝

- «Անկյուններ» մեթոդով բանավիճել՝ «պատերազմի բերած կորուստներն ու մարդկային ճակատագրերը»
- տանը պատրաստված աշակերտների միջոցով ներկայացնել Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը հայ ժողովրդի վրա (I խումբ),
- II խումբը կներկայացնի՝ «Երազե՞լ եք արդյոք ձի ունենալ»։ Գրատախտակին կգրեն ձի բառի հոմանիշները։
- III խումբը կներկայացնի կերպարների հանրագիտարան՝ Շարմաղ, Բիբի, Սիմոն, Ցոլակ։
- անցկացնել քննարկում՝ Ցոլակի ճակատագիրը
- հանձնարարել խմբերին վերնագրել իրենց բաժին ընկած հատվածները, դուրս գրել անծանոթ բառերը, բացատրել կամ տալ հոմանիշները

- քննարկել խմբերի կողմից տրված վերնագրերը՝ «Ցոլակ ձին», «Սիմոնը գիշերային մենության մեջ», «Վերջին տխուր հրաժեշտ», «Ձիավորների՝ դեպի քաղաք ձգվող ուղին», «Հրեղեն ձին», «Մահվան հրապարակը» և «Հույսերի խորտակում»։

Տնային հանձնարարություն՝

I խումբ. տրված բանալի բառերով կազմել կապակցված խոսք՝

- փրկության տենչ
- խելահեղ ցասում
- անմարդկային արարք
- հուսահատ կատաղություն
- չարագործություն

II խումբ. տալ պատմվածքի երեք ձիերի՝ Ցոլակի, Սպիտակ ձիու և Կապույտ ձիու համեմատական նկարագրությունն ու վերլուծությունը՝

Ցոլակ	Կապույտ ձի	Սպիտակ ձի

1. Ի՞նչի խորհրդանիշն է ձիերից յուրաքանչյուրը։
2. Գրողն ինչպե՞ս է նկարագրում նրանց։
3. Ի՞նչ պատահեց ձիերից յուրաքանչյուրի հետ։

III խումբ. բառային աշխատանք՝ ներկայացնել պատմվածքից դուրս գրված բառերի բացատրությունը և գրել դրանց հոմանիշները.

I	II	III	IV
մսուր	կարկամել	բայղուշ	ռունգ
համետ	խայտալ	չեչաքար	խթանել
ընդարմանալ	ամեհի	փիսություն	դարմանել

Ինչպես տեսանք, դասը յուրովի ստեղծագործական աշխարհ է, ուր մուտք է գործում ուսուցիչը և վարպետորեն կարողանում է իր հետ տանել իր աշակերտներին։

«Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր» չարենցյան փիլիսոփայական այս միտքը, թերևս, ամենից առաջ վերաբերում է ուսուցչին. ուսուցիչը պետք է համահունչ դառնա ժամանակաշրջանի ոգուն, քանի որ ներկա սերնդի պահանջը, ըստ ուսուցչի, այլ է, և պահանջվում են նոր մոտեցումներ և մեթոդներ, և հենց ուսուցիչն է կրթության բարեփոխումների առանցքային դեմքը:

Այսօրվա պահանջները ստիպում են մեզ թարմ հայացք նետել ուսուցչի գործունեությանը՝ որպես կրթական գործընթացի առանցքային դեմքի: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն այժմ դիտվում է մի կողմից՝ որպես մասնագիտական ուսուցման որակի չափանիշ, իսկ մյուս կողմից՝ որպես անհատականության հատկանիշ, որը բնութագրվում է աշխատանքային գործառույթների բարձր որակով կատարմամբ, աշխատանքի մշակույթով, միջանձնային հաղորդակցությամբ, մասնագիտական խնդիրները ակտիվորեն և ստեղծագործաբար լուծելու ունակությամբ:

Ուսուցչի մասնագիտական հմտությունները, ինչպիսիք են՝ տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների, գործունեության ձևերի և դրանց կիրառման պայմանների իմացությունը, համակարգչային տեխնոլոգիաների տիրապետումը, գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու ունակությունը, դաստիարակչական և կրթական գործընթաց նախագծելու ունակությունը, իրենց գործունեության արդյունավետությունն ու արդյունքները վերլուծելու ունակությունը, կատարելագործվում են ստեղծագործական և հետազոտական աշխատանք կատարելու ընթացքում:

Մասնագիտական և առարկայական հմտությունների զարգացման մեջ կարևոր է նաև ուսուցիչների ինքնակրթությունը: Այն մեթոդական աշխատանքի ինտեգրալ համակարգի կարևոր օղակն է, մանկավարժների կողմից երեխաների հետ աշխատելու մեթոդների և տեխնիկայի ինքնուրույն ընկալման բարդ և ստեղծագործ գործընթաց:

Հոգեբանական և մանկավարժական գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնազարգացումը և ինքնակրթությունը կարևոր տեղ են զբաղեցնում ուսուցչի մասնագիտական աճում:

Մասնագիտական ինքնազարգացումը մարդկային գոյության ամենակարևոր բաղադրիչներից է: Այն նպաստում է որոշակի կարգավիճակի, դիրքի և կենսական

ստանդարտի ձեռքբերմանը: Մասնագիտական զարգացումը ցանկացած հաջողակ մարդու կյանքի պարտադիր մասն է: Սխալ է այն կարծիքը, որ աշխատանքային բնագավառը մարդկային գոյության ոչ կարևոր մաս է:

Մարդը չի կարող զարգանալ, եթե ի սկզբանե չգիտի իր սեփական անձի բոլոր նրբություններն ու յուրահատկությունները: Ինքնաճանաչումը անձի ուսումնասիրության ամենակարևոր աղբյուրն է: Միայն մարդն անձամբ է ի վիճակի իր կենսական փորձի, որոշումների և գործողությունների հիման վրա տալ իր իսկ ճշգրիտ պատկերը:

Երբ հասուն մարդն արդեն ինքը իրեն և իր անհատական հատկանիշներն ամբողջությամբ գիտի, միայն այդ ժամանակ նա կարող է դրանք օգտագործել ի նպաստ մասնագիտական ինքնազարգացման: Ամեն ինչ կարող է սկսվել սեփական որակների և կարողությունների սովորական զարգացումից, ինչն էլ հետագայում կարող է դառնալ կամ տաղանդ կամ պրոֆեսիոնալիզմ:

ԳԼՈՒԽ II

Հետազոտական աշխատանքների անցկացման մեթոդները և նպատակները

Հետազոտությունը «ստեղծագործական և համակարգված աշխատանք է, որը ձեռնարկվում է գիտելիքների պաշարը մեծացնելու համար»:[3] Այն ներկայացվում է նաև որպես համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը կամ հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը:[4] Ամենապարզ բառերով հետազոտությունը գիտելիքի և ճշմարտության որոնումն է: Ֆորմալ իմաստով այն կանխամտածված ընտրված ռազմավարությամբ թիրախավորված խնդրի համակարգված ուսումնասիրություն է, որը սկսվում է պլանի (դիզայնի) պատրաստման մոտեցման ընտրությամբ և դրա հիման վրա հետազոտական վարկածների նախագծմամբ, մեթոդների և տեխնիկայի ընտրությամբ, տվյալների հավաքագրման գործիքների մշակման, տվյալների մշակման, մեկնաբանման և ավարտվում խնդրի լուծումների ներկայացմամբ:

Մեծ մասամբ, հետազոտությունը որոշակի թեմայով կամ որոշակի երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման գործընթացն է:

Սթինհաուզը հետազոտությունը սահմանում է որպես համակարգված հարցադրումների ամբողջություն, որը (որից ստացված տեղեկատվությունը) հրապարակայնացվում է:

Մանկավարժական հետազոտությունների անցկացման համար կան հատուկ գիտական մեթոդներ, որի իմացությունն անհրաժեշտ է անհատական և կոլեկտիվ գիտական հետազոտություններով զբաղվող յուրաքանչյուրին:

Հետազոտությունների տեսակները.

Հետազոտությունը կարող է դասակարգվել ամենատարբեր հիմքերով՝

- ըստ այդ հետազոտության շրջանակներում կիրառված մեթոդների,

[3] OECD (2015). Frascati Manual. The Measurement of Scientific, Technological and Innovation Activities
[4] Merriam-Webster (2017) Definition of Research [Online] Available at: https://www.merriamwebster.com/dictionary/research [Accessed 10.09.2023]

- ըստ այն գիտելիքի, որը հետազոտությունը նպատակ ունի ստեղծելու կամ վերհանելու,
- ըստ այն թիրախային խմբի, որին հետազոտությունն ուղղված է,
- ըստ հետազոտության հիմնախնդրի և այլն:[5]

Ընդհանուր առմամբ, որպես ամենատարածված դասակարգում, առանձնացվում են որակական և քանակական հետազոտությունները: Դրանք տարբերվում են իրականացման տրամաբանությամբ ու սկիզբ են առնում հակադիր տեսական մոտեցումներից:

Ըստ քանակական մեթոդի՝ գիտելիքը

- ձևավորվում է միայն փորձից, ու ճշմարիտ է այն գիտելիքը, որը ենթարկվում է ճշգրիտ տրամաբանությանը,
- հիմնվում է մաթեմատիկական ու վիճակագրական հաշվարկների վրա,
- օբյեկտիվ է և փորձ է արվում այդ իրականության մասին ճշգրիտ գիտելիքներ ձևավորել:

Այս մեթոդի շարունակողները քննադատ ռեալիստներ են: Նրանք գտնում են, որ կարևոր է օբյեկտիվ իրականությունը ճշգրիտ մեթոդներով հնարավորինս բացահայտելը:

Քանակական հետազոտությունների ուժեղ կողմն այն է, որ որքան հետազոտողներ էլ այն իրականացնեն, նրանք բոլորը կգան միևնույն և համանման եզրահանգումների, քանի որ սոցիալական իրականության բացահայտման մեթոդներն ու մեթոդաբանությունները ճշգրիտ են:

Քանակական հետազոտությունը կարող է իրականացվել հարցաթերթիկների, հարցումների, վիճակագրության, փորձերի միջոցով:

Ըստ որակական մեթոդի՝ գիտելիքը

- հետազոտական է,
- սուբյեկտիվ է,
- ձևավորվում է ակտիվ անձնական և սուբյեկտիվ փորձի արդյունքում

[5] Բալասանյան Ս., Վարդանյան Ն.: ՔՀԿ հետազոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց, էջ 4

Այս հետազոտողները չեն հավակնում բացահայտել օբյեկտիվ իրականությունը ու երբեմն չեն էլ հավատում օբյեկտիվ իրականության վերջնական բացահայտման հնարավորությանը:

Այս հետազոտության մեջ օգտագործվող տեխնիկաներից են հարցազրույցները, բաց հարցաթերթիկները, կյանքի պատմությունները, մասնակիցների դիտարկումները և այլն:

Հետազոտության նպատակներն են ուսումնասիրել, թե որքանով է արդյունավետ իրականացվող հետազոտությունը և թե որքանով է հնարավոր կատարելագործել մանկավարժի մասնագիտական հմտությունները հետազոտական աշխատանքի ընթացքում, ինչպես նաև պարզել, թե ինչպիսի ազդեցություն է այն ունենալու մանկավարժի առարկայական գիտելիքների և հմտությունների զարգացման վրա:

Ձեռնարկվող բոլոր միջոցառումները և քայլերը ենթադրում են անհրաժեշտ պայմանների ստեղծում, հետազոտական աշխատանքների հմտությունների զարգացում, հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում, հետազոտությունների գործընթացը խթանող ուսուցիչների ստեղծագործական միջավայրի ձևավորում:

Եզրակացություն

Գրականության դասը տաճար է, և դեպի այդ տաճար տանող ճանապարհը սկսվում է ուսուցչից։ Եվ որքան վարպետորեն է ուսուցիչը մտնում այդ տաճարի դռներից ներս, օգտագործում ուսուցման արդյունավետ հնարներ և մեթոդներ, այնքան հետաքրքիր ու բովանդակալից է դառնում դասը։

Արդյունավետ ուսուցման պահանջներ բոլորս պետք է ունենանք։

Դասավանդման մեջ բազմազանություն մտցնելով, դասը իրականության հետ կապելով, տարբեր գործողություններ մշակելով, խրախուսելով, ստեղծագործաբար մոտենալով՝ մոտ կկանգնենք որակյալ և արդյունավետ ուսուցմանը։

Հետազոտության ընթացքում եկանք այն եզրահանգման, որ ժամանակակից և կարողունակությունների զարգացմանն ուղղված դասի ընթացքում աշակերտների մասնակցության և ակտիվության ցուցանիշը բարձրանում է, երբ ուսուցիչը զարգացնում է իր մասնագիտական և առարկայական կոմպետենտությունը։ Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառման արդյունքում բարձրանում է սովորողների իմացական գործունեությունը, ինքնուրույն սովորելու կարողությունը, ինքնագնահատման և հաղորդակցման հմտությունները։

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն այժմ դիտվում է մի կողմից՝ որպես մասնագիտական ուսուցման որակի չափանիշ, իսկ մյուս կողմից՝ որպես անհատականության հատկանիշ։

Ուսուցիչների կողմից ստեղծագործական և հետազոտական աշխատանքների իրականացումը կարող է մեծապես նպաստել նրա մասնագիտական և առարկայական հմտությունների կատարելագործմանը, սակայն կարևոր է ի նկատի ունենալ, որ այդ հարցում պետք է ուսուցիչների համար երաշխավորվեն համապատասխան պայմաններ։

Ստեղծագործական կամ հետազոտական աշխատանքների կատարման համար ուսուցիչը պետք է իրականացնի մի շարք ուսումնասիրություններ, իսկ ուսումնասիրությունների իրականացումը նպաստում է մասնագիտական հմտությունների կատարելագործմանը։

Մասնավորապես, երբ ուսուցիչը կատարում է ստեղծագործական կամ հետազոտական աշխատանքներ, դրանք հիմնականում լինում են իր մասնագիտական թեմաներով, ուստի յուրաքանչյուր թեմայի շրջանակներում կատարվող ուսումնասիրությունը նպաստում է ուսուցչի առարկայական և մասնագիտական որակների կատարելագործմանը:

Գրականության ցանկ

Ա.

1. Բալասանյան Ս., Վարդանյան Ն.: ՔՀԿ հետազոտական կարողությունների գործնական զարգացման ուղեցույց:
2. Տողանյան Ն., Խաչատրյան Հ., Գրականություն-: Մեթոդական ձեռնարկ.-Եր.: Զանգակ-, 2008

Բ.

3. OECD (2015). Frascati Manual. The Measurement of Scientific, Technological and Innovation Activities. doi:10.1787/9789264239012-en. hdl:20.500.12749/13290. ISBN 978-9264238800. Archived from the original on 5 June 2020. Retrieved 4 April 2020.
4. Merriam-Webster (2017) Definition of Research [Online] Available at: https://www.merriamwebster.com/dictionary/research [Accessed 10.09.2023]

Հղումներ

1. https://www.academia.edu/37345508/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB_%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%B8%D5%B4%D5%BA%D5%A5%D5%B6%D5%BF%D5%A5%D5%B6%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8_%D5%A5%D6%82_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D6%81%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%AF%D5%B8%D5%B4%D5%BA%D5%A5%D5%B6%D5%BF%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8
2. https://muegn.ru/hy/cognitive/sovershenstvovanie-professionalnoi-kompetentnosti-pedagoga.html
3. https://muegn.ru/hy/cognitive/sovershenstvovanie-professionalnoi-kompetentnosti-pedagoga.html

4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80_%D6%87_%D5%B0%D5%B6%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D6%80